



*Հարգելի ընթերցող,* վիճակագրական տեղեկատվություն սպառողների համար վիճակագրական հրապարակումներից ավելի արդյունավետ օգտվելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նկատառումով, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) նախաձեռնել է *«Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2004»*-ի մշակումն ու հրապարակումը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի, ՀՀ տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է, որը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագիրը մշակվում է ՀՀ ԱՎԾ կողմից վիճակագրական տեղեկատվություն սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա և այլ բաղադրատարրերի հետ միասին ներառում է նաև հրապարակվելիք վիճակագրական ժողովածուների, տեղեկագրերի և այլ հրապարակումների ցանկը և

**Dear reader,** the National Statistical Service of RA (NSSRA) has launched developing and publishing of **“Catalogue of Statistical Publications, 2004”** to create advantageous conditions for statistical information users to use more effectively the statistical publications.

According to the Article 11 of RA Law «On State Statistics», the State Statistical Work Program is the basis for implementation of state statistics on the territory of the Republic of Armenia. Program includes statistical information necessary for the observation of the economic, demographic, social and environmental situation in country, taking into account the availability of resources, the burdens on respondents and the cost-effectiveness.

The program is developed by NSSRA based on the study of the demand of statistical information users and along with other components also includes the list of statistical handbooks, bulletins and other publications, that should be published and

պարբերականությունը:

Վիճակագրական տեղեկատվություն սպառողների ուշադրությանը ներկայացվող «Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2004»-ը, որպես Ծրագրի վերոնշյալ մասի լրացում, նպատակ ունի հանրությանն առավել մանրամասնեցված տեղեկատվություն տրամադրել 2004թ. վիճակագրական հրապարակումների ցանկի, պարբերականության և համառոտ բովանդակության վերաբերյալ:

ՀՀ ԱՎԾ-ում վիճակագրական աշխատանքները (ցուցանիշները) տարվում (հաշվարկվում) են Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած Տվյալների տարածման ընդհանուր համակարգին համապատասխան, որը վիճակագրական տվյալների հավաքագրման, ամփոփման, մշակման, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական համակարգ է: Հայաստանն անդամագրվել է վերոնշյալ համակարգին 2001 թվականի մարտի 29-ից, իսկ 2003 թվականի նոյեմբերի 7-ից անդամակցում է Տվյալների տարածման հատուկ ստանդարտին, որը հանդիսանում է վիճակագրության բնագավառի ամենախիստ միջազգային ստանդարտը:

Բոլոր հրապարակումների (և էլեկտրոնային արտադրանքի) հեղինակային իրավունքը պատկանում է ՀՀ ԱՎԾ-ին:

Վիճակագրական նյութերի օգտագործման դեպքում պարտադիր է ՀՀ ԱՎԾ վկայակոչումը (հղումը):

**Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ**  
**ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ**

Հայաստանի Հանրապետության ազգային  
վիճակագրական ծառայություն, 2004թ.



their periodicity.

The “**Catalogue of Statistical Publications, 2004**” presented to attention of statistical information users, as an addition to the above-mentioned part of the Program, aims to provide the public with the most detailed information on list, periodicity and brief content of 2004 statistical publications.

In the NSS RA the statistical work (indicators) is implemented (are calculated) according to the General Data Dissemination System developed by the International Monetary Fund. It is an unified system of statistical data collection, summarizing, processing, periodicity, as well as information dissemination. Armenia has been subscribed to the above-mentioned system since March 29, 2001, and since November 7, 2003, has been subscribed to the SDDS, which is the strongest international standard in the field of statistics.

The copyright on all publications (and electronic product) is owned by NSS RA.

In case of use of the statistical materials the reference to NSS RA is obligatory.

**S. MNATSAKANYAN**  
**PRESIDENT**  
**NATIONAL STATISTICAL SERVICE**  
**REPUBLIC OF ARMENIA**

National Statistical Service of the Republic of  
Armenia, 2004

Internet: <http://www.armstat.am>

E-mail: [armstat@sci.am](mailto:armstat@sci.am)

հեռախոս՝ 524 542, 523 356

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## INTRODUCTION

«Վիճակագրություն» տերմինը ծագել է լատինական «status» բառից, որը նշանակում է երևույթի վիճակ, դրություն: Այս տերմինը միանշանակ չէ: Նախ և առաջ, «վիճակագրություն» նշանակում է հասարակական կյանքի քանակական տարբեր կողմերը (արտադրություն, արդյունքի բաշխում և փոխանակում, քաղաքականություն, մշակույթ, առողջապահություն, բնակչության կենսամակարդակ և այլն) բնութագրող ամփոփ ցուցանիշների ամբողջություն: «Վիճակագրություն» նշանակում է նաև համապատասխան տվյալների հավաքագրման և ընդհանրացման գործընթաց: Այն գիտություն է, որն արտացոլում է երևույթների «վիճակների նկարագրությունը (փաստումը)»՝ թվային տվյալներով:

The term “statistics” originates from the Latin word “status”, which means the state, situation of phenomenon. This term hasn’t a single meaning. First of all, “statistics” means completeness of overall indicators characterizing the different quantitative sides of public life (production, output distribution and change, policy, culture, health, living standards and etc). “Statistics” also means the process of appropriate data collection and summarizing. This is the science, which reflects the “states’ description (arguing)” of phenomena in numeral data.

Վիճակագրությունը բնութագրվում է մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ զարգացմամբ, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ ՀՀ ԱՎԾ գործունեությունն է՝ ուղղված սոցիալ-տնտեսական, հասարակական երևույթների և գործընթացների որակական և քանակական հարաբերությունների ժամանակի և տարածության որոշակի պայմաններում դրսևորվող օրինաչափությունների թվային բնութագրմանը:

The statistics is characterized by exceeding development in comparison with the other spheres, by necessity of regular improvement of data the collection, processing, summarizing methodology, as well as by continuous growth of the demand for information containing economic, social, demographic and environmental indicators of the country.

State statistics is an activity to be implemented by the state statistics body (NSS of RA) directed to the numerical characterizing of regulations of qualitative and quantitative relations of socio-economic, public phenomena and process under the definite conditions of the time and space.

Երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումները, տնտեսությունում իրականացվող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացնում վիճակագրական տեղեկատվության սպառողներին ապահովելու առավել ճշգրիտ, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական տեղեկատվությամբ, որը հնարավոր է իրականացնել միայն նրանց պահանջարկի ուսումնասիրության, վիճակագրության միջազգային նորմերին համապատասխանող տարողունակ, վստահություն վայելող տեղեկատվական բազայի վարման հիման վրա: Այս ամենի ապահովումը ենթադրում է տվյալների հավաստիություն, դիտարկման դաշտի ամբողջական ընդգրկվածություն, օպերատիվություն:

The social and economic reforms in transition to liberal economic system in the country, the rapid movements in the economy make indispensable the provision of the statistical information users with more accurate, reliable statistical information that also correspond to the standards of the current time. It is possible to implement only based on study of their demands, maintaining of capable and reliable information base, which correspond to the international standards. The ensuring of all those implies the reliability of data, complete coverage of observation field and efficiency.

Վիճակագրական տվյալներն օգտագործվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար և գիտակրթական շրջանների, քաղաքական և այլ հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների, ինչպես նաև երկրի և միջազգային հանրության կողմից: Որպես հանրային շահ հետապնդող մարմին, ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) ցանկը չի սահմանափակում:

Վիճակագրական տվյալների տարածումը ներառում է բազմաբնույթ խնդիրների կատարում՝ վերլուծական նյութերի և վիճակագրական հրապարակումների տարածում, ինչպես նաև դրանց կոչտ կրիչներով կամ էլեկտրոնային փոստով տրամադրում:

The statistical data are used by local and local self-government bodies, business, scientific and educational spheres, political and other public organizations, mass media, as well as by country's and international society. As a body acting for public interests, the NSSRA doesn't restrict the list of statistical information users.

Distribution of statistical data includes implementation of various tasks: distribution of analytical materials and statistical publications, as well as their provision on diskettes and by electronic mail.

Տվյալների արժանահավատությունը հնարավոր է «տեղեկատվություն տրամադրող - վիճակագիր» երկկողմանի փոխադարձ վստահության և հարգանքի վրա հիմնված հարաբերությունների առկայության դեպքում: Տեղեկատվության օպերատիվության ապահովումը ենթադրում է սպառողներին պահանջվող որակի և ծավալի տեղեկատվության տրամադրում՝ սահմանված ժամկետներում, մշակված ձևով (թղթի վրա, մագնիսական կրիչներով, ինտերնետային կապով և այլն): Արդի տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել սպառողների ցանկացած պահանջմունք: Սակայն այդ բնագավառում ՀՀ ԱՎԾ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) ռեալ սահմանափակումների բարդության:

The reliability of data could be provided in case of availability of bilateral relations of “unit presenting an information – statistician” based on mutual confidence and respect. Ensuring of information efficiency implies the provision of users with required quality and volume information, in established time and form (hardcopy, diskette, Internet, etc). The state-of-the-art information technologies allow to consider every need of users. However, in this field, the NSSRA, as statistical service in any country, unavoidably faces complex of real restrictions of resources (financial, personnel, etc).